«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ
ԱՌԱՐԿԱ	ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ և ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԵՂԻՆԱԿ	Սուսաննա Մարգարյան
ՄԱՐԶ	Արմավիր
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	«Արմավիրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն 2
2. ԳԼՈՒԽ 1 «Նորաբանություններն հայ գրականության մեջ» 3
3. ԳԼՈՒԽ 2. «Նորակազմ բառեր Շիրազի Հայոց Դանթեական» պոեմում 10
4. Եզրակացություն. 13
5. Օգտագործված գրականության ցանկ 14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Լեզուն բարդ, շարունակ փոփոխվող և առաջընթաց ապրող համակարգ է: Լեզվի այդ հատկանիշն էլ նոր բառային կազմի համալրումն է և բառիմաստային համակարգի զարգացումը: Լեզվի համակարգում փոփոխականը բառապաշարն է, որում համալրման ու մաքրման գործընթացներ են տեղի ունենում՝ պայմանավորված տնտեսական – քաղաքական տեղաշարժերով: Բառաստեղծումը գործընթաց է, քանի որ հանրային կյանքում տեղի ունեցող փոփոխություններն իրենց անմիջական արտացոլումն են գտնում լեզվի բառապաշարի մեջ:

Գրական լեզվի բառապաշարն օրեցօր հարստանում է նորակազմ բառերով, բառակապակցություններով, դարձվածքային արտահայտություններով: Դրանք ունեն անվանողական արժեք և որպես բառապաշարային միավորներ՝ լայն գործունեություն են ստանում և դառնում լեզվի սեփականությունը: Բառային նորաբանությունները ձևով և իմաստով նորակազմ բառեր են, որոնք առաջին անգամ գործածվում են լեզվում:

Օրինակ՝ *լրագրամբյուղ, տեսակապ, անվանաքարտ:*

Հասարակության մեջ տեղի ունեցող ամեն մի երևույթ, առարկա ստանում է իր անվանումը: Այն բառը և դարձվածքային միավորը, որը կազմվում է նոր հասկացություն արտահայտելու կամ նոր առարկա, երևույթ, հատկանիշ նշանակելու համար, կոչվում է նորաբանություն:

ԳԼՈՒԽ 1

«Նորաբանություններն հայ գրականության մեջ»

Նոր բառը նորաբանություն է համարվում այնքան ժամանակ, քանի դեռ պահպանվում է թարմության կնիքը, և խոսողը գիտակցում է նրա առարկայական տրամաբանական նրբությունն ու ինքնատիպությունը։

Նոր բառերի համար կարևոր է նրանց գործածության հաճախականությունը։ Այսինքն՝ որքան հաճախ գործածվի տվյալ նորաբանությունը, որքան մեծ կարիք ու պահանջ լինի տվյալ բառի ամենօրյա գործածության, այնքան կմեծանա նորաբանության՝ ներ բառ դառնալու հավանականությունը։

Նորաբանությունները բաժանվում են երկու հիմնական խմբի՝

1. Հանրալեզվական
2. անհատական

Հանրալեզվական նորաբանություններ են այն բոլոր նոր բառերը, որոնք կարճատև թե երկար ժամանակամիջոցում անընդհատ կրկնվող գործածությունների հետևանքով անցնում են բառապաշարի գործուն շերտին և հենց դրանով էլ դադարում են նորաբանություն լինելուց։ Օրինակ՝ հեռուստացույց, տիեզերանավ, խաղավար, գեղասահք և այլն։

Անհատական նորաբանություններ են այն բոլոր բառերը, որոնք գործածվում են այս կամ այն գրվածքում, բայց կրկնվող գործածություններ չեն ունենում, հետևաբար չեն ընդհանրացվում և չեն անցնում բառապաշարի գործուն շերտին։ Այս խմբի մեջ մտնում են անհատական այն նորաբանությունները, որոնք Աղայանն անվանում է ստեղծագործական կամ հեղինակային նորաբանություններ։

Նորաբանությունները ստեղծվում են տվյալ լեզվի բառակազմական միջոցներով կամ փոխառվում են նոր առարկաներ, երևույթներ, հասկացություններ արտահայտելու համար և քանի դեռ չեն մտել գործուն բառապաշարի մեջ։

Ստեղծված նորակազմ բառերը լեզվի զարգացման որոշակի շրջանում միայն կարող են դիտվել որպես նորաբանություն։ Երբ այն մտնում է լեզվի համագործածական բառապաշարի մեջ, ընդհանրանում, դադարում է նորաբանություն լինելու, թեպետ նրա նոր լինելը դեռ զգացվում է։

Լեզվական նորաբանությունները առաջանում են անհրաժեշտաբար։ Հանրային կյանքում տեղի ունեցող տեղաշարժերն իրենց անմիջական արտացոլումն են գտնում լեզվի

բառապաշարում: Հասկանալի է, որ այդ բառերը կազմվում են լեզվում արդեն եղած գործուն արմատների ու ածացների միջոցով:

Լեզվական նորաբանությունների տարբերությունը անհատական նորաբանություններից այն է, որ դրանք ստեղծվում են տարբեր նպատակներով: Դրանք լեզվի բառապաշարը հարստացնելու միտում ունեն: Յուրաքանչյուր լեզվական նորաբանություն, լեզվի մեջ հանդես գալով որպես նորակազմ բառ, կարճ ժամանակում լայն տարածում ուրնդհանուր գործածություն է ստանում և դառնում համագործակցական բառ: Մյուս էական տարբերությունն անհատական նորաբանություններից այն է, որ լեզվական նորաբանություններն ունեն անվանողական դեր և իրենց խոսքիմաստային տեսակետից գոյականներ են, քանի որ անվանում են առարկաներ, երևույթներ, հասկացություններ:

Օրինակ՝ *ավիառուղիներ, թռիչքուղի, դիմորդ, մրցուղի, մրցավար, կիսահաղորդիչ, մրցափուլ, մենապար, ատոմակայան, ինքնաթափ, գազատար, դահուկորդ* և այլն:

Անհատական նորաբանությունները գրական լեզվի պակասը լրացնելու համար չեն ստեղծվել, այլ անհատական ոճական նկատառումով և անհատական վերաբերմունքի արտահայտություն են:

Օրինակ՝

Դյութեցին ինձ իրենց խաղով լուսակարկաչ

Քո խոսքերի զանգակները զվարթաձայն:

***

Տաղտկահնչյուն ու միաձայն օրերն իրենց երգն են երգում: /Տերյան/

***

Եվ իմ միակ տաճարն անմեռ

Ոսկեբուրվառ մեր սրտերով

Հայաստանն է հազարալեռ: /Հ.Շիրազ/

***

Ապարանքի եբենոսյան դռներից

Երազանուշ մուշկ ու կնդրուկ է բուրում: /Ավ.Իսահակյան/

Անհատական նորակազմություններն ստեղծվում են գրողների, բանաստեղծների կողմից: Նոր բառեր ստեղծվում են նաև գիտնականների, քաղաքական գործիչների կողմից: Օրինակ՝ Աբեղյանը ստեղծել է կերպար, գործարք բառերը՝ կրճատելով կերպարանք, գործարարք բառերը:

Անհատական նորաբանությունները միատեսակ չեն լինում: Մի մասը, հանդես գալով որպես հասկացությունների ու երևույթների անվանում, բավական լայն շրջանակներ ունի և ընդհանրանալու հնարավորություն:

Օրինակ՝ Նարեկացու ստեղծած բառերի զգալի մասը դարձել է արդի գրական լեզվի սեփականություն /ախտաբորբոք, ամենազգաստ, անստեղծ, բազմաբուրյան, գիսախռիվ, եղեռնալուր, ափաճաճանչ/:

Անհատական նորակազմությունների մյուս մասը տարածվելու, ընդհանրանալու միտում ու հնարավորություն կարող է չունենալ: Դրանք դրսևորվում են այն խոսքային միջավայրում, ուր կյանքի են կոչվել:

Օրինակ՝ *Հորեղբա՛յր Օհան, ինչո՞ւ չես ասել՝*

Իմ հեր՛ը որսի սար է ունեցել:

Այծյամ կա էնտեղ, եղջերու, կխտար:

Վե՛ր կաց, հորեղբայր, գնանք որսասար:

Կարևոր նշանակություն կարող են ունենալ նույն կամ կից տողերում գտնվող բառի հնչյունական կազմը, տաղաչափական զանազան հանգամանքներ:

Մարդու մարմով է անցողիկ, մնացողիկ է ոգին: /Հ.Շիրազ/

***

Կես դարեկան իմ գրկում է կես տարեկան իմ որդին: /Հ.Շիրազ/

***

Նորարար է, հնարար է, նորարար,

Հայոց հույսի մութ մատուռին՝ լուսարար է իմ երգը: /Հ.Շիրազ/

Այս նորակերտ բառերն առաջացել են նույն տողում գտնվող հնչմամբ մոտ բառերի ազդեցությամբ՝ զգալիորեն նպաստելով խոսքի բարեհնչյունությանը, հանգավորմանը:

Կան նորաբանություններ, որ ստեղծվում են երևույթի էությունը խորքով ներկայացնելու, հասկացությունն անհրաժեշտ նրբերանգներով ու բանաստեղծական պատկերավորությամբ արտահայտելու իրականությունը, թարմ ու պատկերավոր ընկալելու կարևոր միջոց.

Կույս աղջիկն լլկանքի մեջ,

Ալևորը՝ խոր բանտում,

Էն կտրիճն է հայրենատենչ

Խիզախ հոգին ավանդում: /Հ.Թումանյան/

***

Ու երկնահաս քո բարձունքին, Արարատի սուրբ լանջին

Կենսաժպիտ քո շողերը պիտի ժպտան առաջին: /Ն.Զարյան/

***

Այստեղ է մեզ դյութել աստվածախանդ Նարեկացին՝

Մեր լեռների անդնդախոր Դանթեն: /Ն.Զարյան/

***

Մահախուճապ սերունդների

Աչքն է դիպել լույս գագաթին

Ու անցել:

***

Մահակնճիռ ճակատին հայոց, հեգ ճակատն մեր սեգ ազգի

Մահաթբջուկ մղձավանջից դուրս է բերում առանց բազկի:

Հասկացությունների փոխաբերական իմաստավորումը, տպավորիչ չափազանցումները, պատկերավորությունը կարևոր են ներակազմությունների համար.

Եվ այն օրից սար ու ձորից ամպերն ինձ են գալիս դեռ՝

Երազներով այն խիտ ու զով անտառները թավշահեր: /Հ.Շիրազ/

***

Ո՜վ մարդ, այժմ ոտքիդ տակ է երկինքն աստղագորգ:

Շիրազի ստեղծագործություններում շատ կան նման նորաբանություններ՝ արեգակնաբիբ աչք, վարդաբողբոջ կարոտ, կապտշուշակ երկինք, կանաչերանգ ափ, ոսկենժար ճշմարտություն, սիրամրմունջ սիրտ և այլն:

Ուժեղ արտահայտչականությամբ աչքի են ընկնում այն նորաբանությունները, որոնց բաղադրիչները հակառակ նշանակություն ունեն. հականիշներ են:

Օրինակ՝

Ո՜ր գեղգեղա վանդակում իմ սոխակը տխրուրախ: /Հ.Շիրազ/

***

Ա՜խ, դառնանուշ իր կույր սիրո

Չճաշակած բարն է գովում:

***

Մերթ փարախ ես դու վշտախինդ:

Շիրազը հաճախ հանդես է բերում նույն արմատով կազմված բառեր՝ օգտագործելով առձայնույթներ և բաղձայնույթներ:

Պատժապարտելի բառը ստեղծվել է դատապարտելի բառի առաջին բաղադրիչի փոփոխությամբ:

Երբեմն հեղինակն իր իսկ ստեղծած բարդության մեջ է փոփոխություն կատարում՝ գործածության մեջ դնելով միաժամանակ երկու նոր բառ: Օրինակ՝ Ն.Զարյանը ստեղծել է հողմաբաշ, փոթորկաբաշ, խանդախանձ, խանդակեզ, խուճապախույս, խուճապավազ, կոպտաքանդակ, պերճաքանդակ բառերը, որոնք խոսքի բազմազանությանը, արտահայտչականությանը նպաստող բանաստեղծական հոմանիշներ են:

«Խորամանկ» հասկացությունն արտահայտելու համար մեր լեզվում բազմաթիվ բառեր կան, բայց Շիրազը մի նոր բառ է ստեղծել՝ ցանկանալով ուժեղացնել խոսքի հուզական բովանդակությունը.

Լռեց վեղարն աղվեսախոս,

Եվ ծառս եղավ թագուհին:

Նոր, բաղձալի իրականությունը բանաստեղծական ըբռնումով Շիրազի ստեղծագործությունների մեջ հաճախ խորհրդանշվում է «գարուն» հասկացությամբ:

Բանաստեղծություններից մեկում գարունը որակվում է «վարդահանդես» նորակազմ մակդիրով.

- Ծլե՛ք, ելե՛ք,- կանչում եմ ես,- բողբոջեն երկրիս վրա

Գարունները վարդահանդես, թող գարունը կուրծքը բանա…

Բովանդակության հանգեցվածությամբ օժտված նորակազմությունները կարևոր դեր ունեն բանաստեղծական խոսքի սեղմությունն ապահովելու գործում՝ հաճախ փոխարինելով մի քանի բառանոց նկարագրությունների:

Օրինակ՝

Իրավ, խենթ է իմ քնարը, որ չի բախում այլ մի դուռ,

Բացի հայոց բախտի դռնից, Մասիսի դռնից աստղալուռ: /Հ.Շիրազ/

Այսինքն՝ բացվող դուռ, որ աստղային լռություն ունի՝ սառն ու անարձագանք:

Այսպիսի նորաբանությունները հանդես են գալիս բանաստեղծի համար կենսական հետաքրքրություն ներկայացնող ընդհանրացումներ: Սրանց մեջ շոշափելի է ոչ միայն մտքի, այլև զգացմունքի, հույզի խստացումը: Այսպիսի բառերը հանդես են գալիս որպես իրականության բառաստեղծական ըմբռնման ինքնատիպ արտահայտություններ:

Օրինակ՝

Կմոլորվեր մեր քարավանն ամպրոպաշունչ գիշերներին,

Կկոչեինք, եթե ճամփին չբուցկլտար հայոց լեզուն: /Ն.Զարյան/

***

Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում,

Մեր հին սազի ողբանվագ, լացակումած լարն եմ սիրում: /Ե.Չարենց/

Անհատական նորաբանություններն առաջանում են բարդեցման և ածացման ճանապարհով: Բառակազմական ամենաարդյունավետ եղանակը իսկական բարդությունն է, հատկապես հոդակապով բարդությունները: Հաճախ նոր բառեր են ստեղծվում նախապես գոյություն ունեցող բարդ բառերի բաղադրիչներից մեկի փոփոխությամբ, ընդ որում ավելացվող նոր բաղադրիչը փոխարինվողի հետ սովորաբար առնչվում է հոմանիշային կամ հականիշային կապով:

Օրինակ՝ Պ.Սևակը անշահագետ բառը ստեղծել է անշահախնդիր բառի երկրորդ բաղադրիչի փոփոխությամբ.

Անշահագետ օգնություն եք ցույց տալիս՝

Ես հպարտ եմ ձեր օգնությամբ:

Կրծքիս սալին սեր է կոփում սեր սիրամոտ իմ սիրտը,

Սիրաշշունջ, սիրամրմունջ, սիրատրտունջ իմ սիրտը,

Հազար սրտի սիրաբաժին սիրակամուրջ իմ սիրտը։

Գրական լեզվում ստեղծված նոր բառերի որակը, արտահայտչականության աստիճանը սերտորեն առնչվում է ժամանակի գրական ճաշակի, գեղագիտական մակարդակի հետ։ Մերժելի են այն նորակազմ բառերը, որոնք հանդես են գալիս որպես ավելորդություն։

ԳԼՈՒԽ 2

ՆՈՐԱԿԱԶՄ ԲԱՌԵՐ «ՀԱՅՈՑ ԴԱՆԹԵԱԿԱՆԸ» ՊՈԵՄՈՒՄ

Շիրազի պոեմի նորակազմ բառերի քննությանը լիարժեք կատարելու նպատակով բառերն առանձնացնում ենք հետևյալ սկզբունքով. համեմատել ժամանակակից հայերենի ամենածավալուն բացատրական, ինչպես նաև նորաբանությունների հայտնի բառարանների, Շիրազի այս երկի բառապաշարին այս կամ այն չափով անդրադարձած աշխատանքների տվյալների հետ:

Տարիների ընթացքում պոեմն անընդհատ մշակվել է, ավելին՝ 1960-ական թթ. սկզբին «հեղինակն անմիջապես սկսել էր նրա լրամշակումը՝ այն գոնե եղեռնի 50-ամյակի առթիվ տպագրել կարողանալու հույսով», ուստի այն կարող էր ունենալ բնագրային ինչ-ինչ տարբերություններ:

Այսպես, գրքում նկատում են, որ ջրասույզ սովորական բառի փոխարեն առկա է արցունքասույզ նորակազմ բառը. համեմատենք «*Թե չչորանային մնացած հայ մայրերի ու որբ մանկանց արցունքները՝// Այժմ ջրասույզ կանեին հայոց վշտի դեմ մշտալուռ ողջ երկրագունգը» /էջ 8/ - «Թե չչորանային մնացած հայ մայրերի ու որբ մանկանց արցունքները՝// Այժմ արցունքասույզ կանեին հայոց վշտի դեմ մշտալուռ ողջ երկրագունդը»:* Սա թերևս պոեմի ձեռագրական տարբերությանն է վերաբերում՝ կապված վերանայման, խմբագրման կամ սրբագրման հետ:

Պոեմի դեռևս դուրս մնացած այդ հատվածները, բնականաբար, նույնպես անհրաժեշտ են ոչ միայն առհասարակ, այլև հեղինակային լեզվի բառապաշարի, վերջինիս նորակազմ բառերի ամբողջացման տեսանկյունից: Ըստ այդմ գրքում բերված հատվածներից առանձնացնում ենք հետևյալ 23 նորակազմ բառերը: Սրանք ըստ խոսքիմաստային պատկանելության կարելի է բաժանել մի քանի խմբի:

1/ Առանձնացնում են շուրջ մեկ տասնյակ նորակազմ գոյականներ, որոնք երկու տեսակ են՝ իբրև բարդ կամ ածանցավոր բառեր:

Ա/ Բարդ բառեր՝ բաղադրված ա հոդակապով, և որոնց բաղադրիչները հիմնականում գոյականներ են, բացառություն սրբալեռ բառի:

Գայլադրունք-ը «վիպական տեղանուն /անեզական բառ/» իմաստով պատմական վայր է. Գողթն գավառի Նախիջևանի համանուն դարպասը, որտեղով, ինչպես Դանթեի պոեմում Դժոխքի դռնով մտնում են ինքն ու Վերգիլիուսը, անցնում են բանաստեղծը և նրան ոգեկից խումբը. «*Եվ ահա անցանք մենք դանթեալուռ Գայլադրունքով»:*

Միայն գոյական բաղադրիչներով են կազմված նաև հետևյալ բառերը. *ձյունակուռք «ձյան նման սառը կուռք՝ անտարբեր պաշտամունքի առարկա», ճամփագլուխ «ճանապարհի վերջը՝ գլուխը, ճամփեզր», մեղսաճահիճ «մեղքերի ճայիճ՝ հոսանուտ՝ գարշահոտ տեղ»: Օրինակ՝ «Եվ այսպես հասանք իմ ձյունակուռքին»: «Այս Գայլի դրունք այն գայլերը չեն, // Որ ճամփագլխին այն էլ քեզ խաչեն»: «Քնած աստծուն խռովենք պիտի դժոխքով այս նոր, // Այս դարավկա մեղսաճահիճով դեռ խելացնոր»:*

Ածական և գոյական բաղադրիչներով է կազմված սրբալեռ *«նվիրական սուրբ լեռ»* բառը: Օրինակ՝ *«Այն սրբալեռան՝ ում վեհ գագաթը տապանով Նոյի // Երրորդ մայր Եվան եղավ մարդկության փրկության, գոյի»:*

Բ/ Ածանցավոր բառեր, որոնք բաղադրված են միայն –ուհի իագականանիշ վերջածանցով: Դրանք այստեղ երեքն են՝ *հարավուհի/ք/ «հարավի կին բնակիչ, կին-հարավցի», հյուսիսուհի/ք/ «հյուսիսի կին բնակիչ, կինՀյուսիսցի»: Օրինակ՝ «Ո՛վ հարավուհիք, /Ծո՛վ հյուսիսուհիք, /Գոնե նզովքի շանթով խոսեիք…»: «Իր զորքն իրեն տանք… Ի՞նչ եք ապշանում: Ո՛վ կույր թրքուհի՝ բացաչք վագրուհիք»:*

2/ Ածականները համեմատաբար մեծ թիվ են կազմում, դրանք հիմնականում բարդ, որո՞ դեպքերում նախածանցավոր բառեր են:

Ա/ Բարդ բառերը բաղադրված են ա հոդակապով, բաղադրությունը տեղի է ունենում գոյականով և այլ խոսքի մասի պատկանող բառով. *գաղտնասաստ «խիստ գաղտնի. գաղտնիքի պես կասեցվող՝ սաստվող», դարավկա «դարին բնորոշ՝ հատուկ. /տվյալ/ հարյուրամյակում տեղի ունեցած», կայծակնանման «կայծակի նմանվող, կայծակկ հի՞եցնող, իբրև կայծակ՝ շանթ», հազարանժույգ «բազում՝ անթիվ նժույգներ՝ ունեցող. ահռելի ուժ ներկայացնող», մեղրակարոտ «մեղրի կարոտ, քաղցրից զուրկ», յոթնամեղ «շատ՝ անհամար՝ յոթնապատիկ մեղք», յոթնամիլիոն «յոթ միլիոնի չափ՝ չափով. անասելի շատ», յոթնանարեկ «բազում՝ շատ նարեկներ՝ Նարեկացիներ ունեցող», սիրարար «սեր տածող՝ առաջ բերող. Բարի», սնամարմար «սև՝ սև գույնի մարմար», տղմաթաղուկ «տիղմի մեջ թաղված, տիղմաթաղ եղած»* և այլն:

Օրինակ՝ *«Ե՛վ աստ և թե՝ անդ, և՛ թե ա՛ստ, // Այս էլ եղեռն է մի նոր, գաղտնասաստ»: «Քնած աստծուն խռովենք պիտի դժոխքով այս նոր, // Այս դարավկա մեղսաճահիճով դեռ խելացնոր»: «Նիագարայի հազարանժույգ, կայծակնանման // Ճերմակ ձիերի բաշից մի մազ էլ չեկավ օգնության»: «Որ չսատկեն մեղրակարոտ // Զույգ մեղավոր ցեղն արյունոտ»: «Եվ ուխտի էինք ելնում՝ դատ-ուխտի՝ // Օծելու համար թաղվածներն անճար, // Մեր յոթնամիլիոն զոհերին*

բախտի»: «Ձեր սուրբ Նարեկի ո՞ր մեղքի համար, // Լուռ պատարագվեց հայ գենն իմ ազգի՝ // Մեր յոթնանարեկ ազգի սիրարար»: «Լուռ պատարագվեց հայ գենն իմ ազգի՝ // Մեր յոթնանարեկ ազգի սիրարար»: «Ու տեսանք շիրիմն իմ սևամարմար, // Որ, ա՜խ փշրված ու պղծված էր»: «-Ձեր խղճի անխիղճ ու տղմաթաղուկ լաբիրինթոսում // Եղեռնից խեղված ուղեղիս ողբով, երգով իմ ոգու // Ինչպես էլ շանթեմ անունն Աստծու, անունն Արարչի» և այլն:

Գ/ Իսկ մեկ դեպքում ունենք ան- նախածանցով կազմություն՝ անասուպ *«ասուպից զուրկի, մեն-մենակ»:* Օրինակ՝ *«Դուք էլ, մեծամեծ ոգիներդ սուրբ, // Խղճի ասպետներ՝ աստղեր անասուպ»*:

3/ Կան նորակազմ բայեր, որոնք ոչ թե առանց –վ- ածանցի ձևից, այլ –վ-վ միջածանցով միանգամյա կազմությունն են, այլ կերպ ասած՝ հանդես են գալիս իբրև կրավորակերպ չեզոք սեռի իմաստ կրող բառեր:

Դրանք այստեղ երեքն են՝ անապատվել «անապատանալ, անապատի վերածվել, չոր ու ցամաք անկենդան դառնալ», պատարագվել «զոհաբերման պաշտամունքի արժանանալ», փեթակվել «հավաքվել՝ կուտակվել. փեթակ դառնալ»: Օրինակ՝ «Որ փեթակվեն՝ ընդդեմ վայոց՝ //Անապատված այն՝ հողն հայոց»: «Ձեր սուրբ Նարեկի ո՞ր մեղքի համար, // Լուռ պատարագվեց հայ գենն իմ ազգի՝ // Մեր յոթնանարեկ ազգի սիրահար»:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այս ամենից եզրակացնում ենք.

Հասարակական, քաղաքական, տնտեսական, սոցիալական կյանքի վերափոխմամբ պայմանավորված՝ ի հայտ են գալիս նոր բառեր։

Այսօրվա իմաստային նորաբանությունները շատ կայուն և հետևողական գործածվում են համապատասխան ոլորտներում։

Նորաբանությունների ստեղծումը, իմաստափոխությունը պայմանավորված են ներլեզվային գործընթացով։

Նորաբանությունները շատ կարևոր են խոսքի զարգացման, բառապաշարի հարստացման, խոսքը ավելի հուզական, պատկերավոր դարձնելու համար։

Նորակազմ բառերը, որոնք «Հայոց դանթեականը» պոեմի տպագրության ընթացքում բնագրի առանձին հատվածների զեղչման հետևանքով մնում էին անհայտ, այժմ հնարավոր է դառնում ընդգրկելու այդ երկրի բառապաշարի նորակազմությունների ցանկի մեջ։ Ըստ այդմ, ինչ խոսք, համալրվում է հեղինակի լեզվի բառապաշարի, թերևս, ամենակարևոր մասը, այլը ավելի է մեծանում ժամանակակից հայերենի ընդհանուր բառապաշարի մեջ նորաբանությունների քանակը։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գ. Ջահուկյան «Հայոց լեզվի ոճաբանություն»
2. Ս. Մելքոնյան «Ակնարկներ յակոց լեզվի ոճաբանության»
3. Անուշավան Սողոմոնյան «Նորաբանությունների ըմբռնման հարցի շուրջ»
4. ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտ